ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

28.12.2021թ. կնքված N ԱԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/04-1 «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան

09 նոյեմբեր 2022 թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Բ. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «ՍԻՓԻԵՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող», (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 28.12.2021թ. կնքված N ԱԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/04-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 3.1 կետում նշված 10650240 (տաս միլիոն վեց հարյուր հիսունհազար երկու հարյուր քառասուն դրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 11517120 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար հարյուր քսան դրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն բառերով:

1.1.1 Հավելված 2-ի բենզին ռեգուլյար գնման առարկայի մատակարարման ենթակա քանակ սահմանել 23100 լիտր:

1.1.2 Հավելված 3-ի բենզին ռեգուլյար գնման առարկայի վճարման ենթակա գումար սահմանել 9535680:

1.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«ՍԻՓԻԵՍ ՕԻԼ» ՍՊԸ
ք.Երևան,Վ. Սարգսյան 3	ք. Երևան,Պուշկինի 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011018414	Հ/Հ 1660006430550100
ՀՎՀՀ՝ 02527728	ՀՎՀՀ 02665864
Գլխ. քարտուղար	Տնօրեն
Բ. Սահակյան	Ա.Դանիելյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.